

Բագրատ Անգլերեն լեզուով գրութիւն մը կարդաց, մեկնաբանելով Փարիսեցիի եւ Մաքսաւորի առակը, եւ բացատրելով թէ ի՞նչ ոգիով պէտք է աղօթել:

Շաբաթ երեկոյ Ղպտոց Մայրավանքի՝ Ս. Անտոն անապատական եկեղեցւոյ մէջ, - որուն անուան տօնն էր այդ օր - առաջին անգամ կայացած նմանօրինակ հաւաքին իր բաժինը բերաւ Հայց եկեղեցին: Տ. Գուսան Վրդ. Այնաճաճ մենեռագեց Հոգեգալստեան շարականներէն մին: Հանելի էր ունկնդրել ծնծղաներու աղմուկով ընկերացած Ղպտի եկեղեցւոյ շարականները: Յետոյ բոլորն ալ եպիսկոպոսարան հրաւիրուեցան:

Կիրակի, եգրափակիչ հաւաքը, ուրիշ տարիներու նման, Յոյն-Կաթոլիկ եկեղեցւոյ մէջ էր: Եպիսկոպոս Լուսֆի Լահիամ Արաքերէնով եւ Անգլերէնով խօսեցաւ անցեալ տարւոյ մէջ էֆիւմէնիկ շարժումի իրագործումներու մասին: Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արքեպս. եւ Հոգշ. Տ. Գուսան Վրդ., մէկը մաղթանքով եւ միւսը աղօթքով, մաս առին յայտագրին: Եղան մաղթանքներ աշխատանքի լեզուներով եւ շեշտուեցաւ Բրիստոնէական կարեւոր տօները միասին տօնելու կարեւորութիւնը:

Տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:

Գ. Ճ.

ԵԶՆԻԿ ՎՐԴ. ՊԱԼԵԱՆ ԿԱՐԳԱԼՈՅԾ

Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Միաբանութեան անդամներէն Հոգ. Տ. Եզնիկ Վրդ. Պալեան, 18 Յուլիս 1992 թուակիր նամակով կը յայտնէր իր որոշումը Միաբանութեան անդամութենէն հրաժարած ըլլալու: Օգոստոս 31 թուակիր նամակով թելադրած էինք որ «կուսակրօն եկեղեցականը քանի որ Միաբանութեան մը իշխանութեան ենթակայ անդամ է . . . պէտք է ընդունուի ուրիշ Միաբանութեան մի իշխանաւորէն: Հանեցէ մեզի իմացնել թէ Հայց. եկեղեցւոյ ներկայ միւս Միաբանութեանց իշխանաւորներէն

(Էջմիածին, Անթիլիաս, Կ. Պոլիս) ո՞ր մէկուն դիմում կատարած էք եւ ընդունուած:»

Մեր յաջորդ անուղղակի տեղեկութիւնը եղաւ որ Տ. Եզնիկ Վրդ. Պալեան ամուսնութիւն կնքած է 1992 Սեպտեմբեր 27ին:

Տնօրէն Ժողովի երկու Նոյեմբեր նիստին մէջ նկատի առինք վերոյիշեալ տուեալները, եւ այսու գիրով կարգալոյծ կը յայտարարենք Տ. Եզնիկ Վրդ. Պալեանը, որ աշխարհականաց կարգը դասուելով պիտի կոչուի Սիմոն Պալեան:

11 Նոյեմբեր 1992

ԹՈՐԳՈՄ ԱՐՔ. ՄԱՆՈՒԿԵԱՆ
Պատրիարք Երուսաղէմի